

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ստուգաթերթ N 50

Հասարակական զուգարանների շահագործում
(ՏԳՏԴ ծածկագիր՝ 81.29.0)

_____ (տեսչության տարածքային մարմնի անվանումը) _____ (գտնվելու վայրը) _____ (հեռախոսահամարը)

_____ (ստուգող անձի պաշտոնը) _____ (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (ստուգող անձի պաշտոնը) _____ (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ (ստուգող անձի պաշտոնը) _____ (ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ ավարտը՝ _____

_____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը) _____ (ՀՎՀՀ-ն)

_____ (տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը) _____ (հեռախոսահամարը)

_____ (տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) _____ (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը /Ընդգրկված հարցերի համարներ _____

N	Հարց	այ n	ոչ	չ/այ	Կշիռ	հղում	Ստուգման մեթոդ	Մեկնաբա- նություն
1.	Ստացիոնար հասարակական զուգարանը /այսուհետ՝ ստացիոնար զուգարան/ ապահովված է՝					Հղում 1, կետ 9, 12	Տեսողական	
1.1	անհատական խցերում և նախամուտքում պատի կախիչներով				1			
1.2.	փակվող դռներով անհատական խցերով				2			
1.3.	տղամարդկանց բաժնում միզամանների տեղադրման սենքով (հանրության զանգվածային այցելությունների համար նախատեսված զուգարաններում),				2			
1.4.	հերթապահ անձնակազմի սենքով (2-ականից ավելի խցերի դեպքում, հանրության զանգվածային այցելությունների համար նախատեսված զուգարաններում)				1			
1.5.	նախամուտքով, որտեղ տեղադրվում են լվացարանները և երեխաների տակդիրների փոխման սեղանը (տակդիրների փոխման սեղանը տեղադրվում է հանրության զանգվածային այցելությունների համար նախատեսված զուգարաններում), Նշում 1				2			
1.6.	սենքով կամ պահարանով մաքրման գույքի պահպանման համար:				2			
2.	Ստացիոնար զուգարանը ջեռուցվում է:				2	Հղում 1, Կետ 10.	Տեսողական	
3.	Ստացիոնար զուգարանը ունի արհեստական լուսավորություն:				2	Հղում 1, Կետ 10.	Տեսողական	
4.	Առանձին կառույցներում տեղակայված ստացիոնար զուգարանը ապահովված է բնական օդափոխանակությամբ (պատուհաններ, վերնափեղկեր)::				1	Հղում 1, Կետ 11	Տեսողական	
5.	Առանձին կառույցներում տեղակայված ստացիոնար զուգարանը ապահովված է արտաձիգ օդափոխականությամբ՝ օդի արտաձգման մղանցքների (խորշերի) միջոցով:				2	Հղում 1, Կետ 11	Տեսողական	

6.	Հասարակական շենքերում տեղակայված ստացիոնար զուգարանը ապահովված է բնական օդափոխանակությամբ: Նշում2				3	Հղում 1, Կետ 11	Տեսողական	
7.	Հասարակական շենքերում տեղակայված ստացիոնար զուգարանը ապահովված է օդի արտաձգման մղանցքներով: Նշում3				3	Հղում 1, Կետ 11	Տեսողական	
8.	Կանանց և տղամարդկանց բաժիններում 3-ականից ավելի սանիտարական սարքավորումներով ստացիոնար զուգարանները (ստադիոններում, թատրոններում և այլն) ապահովված են ներհոս-արտաձիգ արհեստական օդափոխանակությամբ:				3	Հղում 1, Կետ 13	Տեսողական	
9.	Ստացիոնար զուգարանի հատակի կառուցվածքը ապահովում է հեղուկների հոսքը դեպի կոյուղու ցանցին միացված տրապը:				2	Հղում 1, Կետ 14.	Տեսողական	
10.	Ստացիոնար զուգարանի պատերը պատված են հեշտ լվացվող, հարթ և ջրանթափանց նյութերով (կերամիկական և մետալախե սալիկներ, մարմարի փշրանքով մոզաիկ հատակ և այլն):				3	Հղում 1, Կետ 14.	Տեսողական	
11.	Ստացիոնար զուգարանի ջրահեռացման համակարգերի կառուցվածքը համապատասխանում է շինարարական նորմերին Նշում3					Հղում 1, Կետ 15,16	Տեսողական Փաստաթղթային և	
12.	Կենտրոնացված ջրահեռացման համակարգի բացակայության դեպքում ապահովվում է կեղտաջրերի հեռացումը ջրանթափանց հիմքով և պատերով (բետոնյա, ցեմենտյա կամ երկաթայնացմամբ սվաղված աղյուս) հորերում:				2	Հղում 1, կետ 15,16	Տեսողական Փաստաթղթային և	
13.	Կեղտաջրի հորում կեղտաջրերի կուտակման օրական ծավալը չի գերազանցում 1 մ ³ Նշում1				2	Հղում 1, կետ 16	Տեսողական, Փաստաթղթային և՝ հորի նախագիծ	

14.	Կենտրոնացված ջրահեռացման համակարգի բացակայության դեպքում ապահովվում է կեղտաջրերի հեռացումը կեղտաջրերի մաքրման սարքավորումներով ապահովված տեղային կառուցում կամ ջրանթափանց հիմքով հորում:				2	Հղում 1, կետ 16	Տեսողական, Փաստաթղթային և՛ կառույցի անձնագիր	
15.	Կեղտաջրերի մաքրման կառույցը կամ ջրանթափանց հիմքով հորը տեղակայված է բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս 15 մ հեռավորության վրա:				3	Հղում 1, կետ 16	Տեսողական, Չափագրում	
16.	Կեղտաջրերը ջրանթափանց հորում կուտակելու դեպքում ունեն պայմանագիր մասնագիտացված կազմակերպության հետ՝ ասենիզացիոն մեքենայի միջոցով կեղտաջրերը տեղափոխելու համար:				3	Հղում 1, կետ 17	Տեսողական, Փաստաթղթային և	
17.	Կեղտաջրերը ջրանթափանց հորից ժամանակին տեղափոխում են՝ ջրանթափանց հորերում 2/3-ից ավելի կեղտաջրերի կուտակում չկա:				3	Հղում 1, կետ 17	Տեսողական, Փաստաթղթային և, հաշվարկ	
18.	Ջուգարանին տրվող խմելու ջրի որակը համապատասխանում է նորմերին: Ո՛Ւ Նշում5				3	Հղում 1, կետ 18, հղում 2	լաբորատոր	
19.	Տեղադրված լվացարանները ունեն արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներ կամ էլ առանց ծորակի կառավարման հարմարանքի՝ զգայական (սենսոր) կառավարմամբ:				2	Հղում 1, կետ 19	Տեսողական	
20.	Առանձին կառույցներում տեղակայված ստացիոնար զուգարանների մոտեցման ճանապարհները ապահովված են արհեստական լուսավորությամբ:				2	Հղում 1, կետ 8	Տեսողական	
21.	Առանձին կառույցներում տեղակայված ստացիոնար զուգարանների մոտեցման ճանապարհները ունեն համապատասխան ցուցատախտակներ:				1	Հղում 1, կետ 8	Տեսողական	

22.	Շարժական զուգարանները տեղակայվում են բնակելի և հասարակական բնակելի շենքերից առնվազն 15մ հեռավորության վրա: Նշում 4				3	Հղում 1, կետ 21	Տեսողական, չափագրում	
23	Շարժական զուգարանները ունեն կեղտաջրերի կուտակման և տեղային մաքրման կառուցվածք (տարողություն) Նշում 4 կամ միացված են ջրմուղու և կոյուղու ցանցերին:				3	Հղում 1, կետ 22	Տեսողական, փաստաթղթային	
24.	Շարժական զուգարանների շահագործումը և կուտակված կեղտաջրերի հեռացումը իրականացվում է տեխնոլոգիական հրահանգին համապատասխան:				3	Հղում 1, կետ 23	Տեսողական, տեխնոլոգիական հրահանգ	
25.	Կեղտաջրերի վերջնական հեռացման համար կնքվում է պայմանագիր ջրահեռացման աշխատանքներ իրականացնող կազմակերպության հետ:				3	Հղում 1, կետ 23	Տեսողական, պայմանագիր	
26.	Շարժական զուգարանների լվացարանը տեղադրվում է՝ նախամուտքում կամ դրա բացակայության դեպքում անմիջապես խցում: Լվացարանի բացակայության դեպքում շարժական զուգարանը ապահովվում է ախտահանիչ նյութով տոգորված միանվագ օգտագործման անձեռոցիկներով:				3	Հղում 1, կետ 24	Տեսողական,	
27.	Հանգստի գոտիներում լվացարանը կարող է տեղակայվել բացօթյա՝ շարժական զուգարանին անմիջապես հարակից տարածքում:				3	Հղում 1, կետ 24	Տեսողական,	
28.	Զուգարանների սենքերը ապահովվում են ամբողջական, հարթ մակերեսներով: Սենքերը և սարքավորումները պահվում են մաքուր վիճակում:				3	Հղում 1, կետ 25	Տեսողական,	

29	Ստացիոնար և շարժական զուգարանները /այսուհետ՝ զուգարան/ պահովված են.					Հղում 1, կետ 26	Տեսողական	
29.1	հեղուկ օճառով				2			
29.2	ծեղքերի չորացման համար էլեկտրական սարքերով կամ թղթյա միանվագ օգտագործման սրբիչներով				1			
29.3	զուգարանի թղթով				2			
29.4	խցիկներում աղբանոթներով:				2			
30.	Ճանճերից պաշտպանվելու համար, զուգարանի սենքերի լուսամուտների օդանցքները ցանցապատված են:				2	Հղում 1, կետ 27	Տեսողական	
31.	Սպասարկող անձնակազմը առանձին սենքում կամ պահարանում պահում է մաքրման գույքը՝ խոզանակներ, լաթեր, ախտահանիչ լուծույթներ, դոպլեր և այլն:				1	Հղում 1, կետ 28	Տեսողական	
32.	Մաքրման և ախտահանման աշխատանքների վերաբերյալ պատին փակցված է ժամանակացույց, որտեղ աշխատակցի կողմից կատարվում են նշումներ՝ յուրաքանչյուր մաքրման աշխատանքից հետո:				1	Հղում 1, կետ 29	Տեսողական	
33.	Շարժական զուգարանները մաքրող անձնակազմի համար հատկացված են սենքեր:				2	Հղում 1, կետ 30.	Տեսողական	
34.	Շարժական զուգարանների մաքրման պարագաների, ախտահանիչ նյութերի, հիգիենայի պարագաների պահման համար հատկացված են սենքեր:				2	Հղում 1, կետ 30.	Տեսողական	

35.	Սանիտարական սարքավորումների, լվացարանների, երեխաների տակդիրների փոխման համար սեղանների, հատակի, պատերի ախտահանման (երկնվազ սրբում, ողողում ջրով) համար օգտագործվում է 1%-ոց քլորամին Բ, լվացող-ախտահանող միջոցներ՝ 5 գ. 100սմ ² մակերեսի հաշվարկով, 0.5%-անոց լվացող նյութի և քլորամին Բ-ի խառնուրդ, կայցիումի հիպոքլորիդի (0.5%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթներ:				3	Հղում 1, Կետ 31.	Տեսողական	
36.	Մաքրման պարագաները ախտահանում են աշխատանքային օրվա վերջում նատրիումի հիպոքլորիդի (0.5%), քլորամին Բ-ի (1%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթների մեջ 1 ժամ ընկղմելով, որից հետո՝ պարզաջրելով:				3	Հղում 1, Կետ 32.	Տեսողական	
38.	Ախտահանիչ լուծույթների պահանջվող տոկոսայնությունը պահպանվում է:				3	Հղում 1, Կետ 31, 32, 35	լաբորատոր	
39.	Զուգարանում սահմանված կարգով իրականացվում է ամենօրյա և հիմնական սանիտարական մաքրում, ախտահանում: Զուգարանի սենքերը և սարքավորումները պահվում են մաքուր վիճակում: Սենքերի պատերին, հատակին և սարքավորումների մակերեսներին չկան տեսանելի աղտոտվածության հետքեր կամ հատակի մակերեսին ջրակուտակումներ, խոնավություն:				3	Հղում 1, Կետ 33, 34	Տեսողական	
40.	Ամենօրյա սանիտարական մաքրումը և ախտահանումը կատարվում է առնվազն 2 անգամ և ըստ անհրաժեշտության:				3	Հղում 1, Կետ 33, 34	փաստաթղթային	
41.	Զուգարանի սանիտարական մաքրումը կատարվում է խոնավ եղանակով:				2	Հղում 1, Կետ 33, 34	Տեսողական, հարցում	

42.	Սանիտարական մաքրումը և ախտահանումը ընդգրկում է սենքերի պատերի, հատակի, դռների բռնակների և սարքավորումների մաքրումը և ախտահանումը:				2	Հղում 1, Կետ 33, 34	Տեսողական, հարցում	
43.	Զուգարաններում սենքերի հիմնական մաքրումը կատարվում է շաբաթը մեկ անգամ ախտահանիչ նյութերի օգտագործմամբ (6%-անոց ջրածնի գերօքսիդի և 0.5%-անոց լվացող նյութի խառնուրդով):				2	Հղում 1, Կետ 35	Տեսողական, հարցում	
44.	Հիմնական մաքրումը ընդգրկում է սենքերի պատերը, հատակը, առաստաղը, պատուհանները, դռները, աղբարկղները և սարքավորումները:				2	Հղում 1, Կետ 35	Տեսողական, հարցում	
45.	Զուգարաններում կենցաղային աղբը կուտակում են աղբարկղներում				2	Հղում 1, Կետ 36	տեսողական	
46.	Աղբարկղներում տեղադրված են պոլիէթիլենային տոպրակներ,				2	Հղում 1, Կետ 36	տեսողական	
47.	Աղբարկղները կափարիչի ոտնակային հարմարանքով են:				1	Հղում 1, Կետ 36	տեսողական	
48.	Տարին 2 անգամ (ինչպես նաև աղիքային վարակիչ հիվանդությունների հետ կապված համաճարակային լարված իրավիճակների դեպքերում) կատարվում են միջատասպան և կրծողասպան (դեզինսեկցիոն-դեռատիզացիոն) աշխատանքներ:				2	Հղում 1, Կետ 33	փաստաթղթային ն	

49	Հասարակական զուգարանների սենքերի օդային միջավայրը հոտից և վնասակար մանրէներից զերծ մնալու համար առնվազն 3 ամիսը 1 անգամ իրականացվում է օդի ճառագայթում (օզոնացման միջոցով):				2	Հղում 1, Կետ 37.	Տեսողական փաստաթղթային և	
50.	Ջուգարանակոնքերի և միզամանների ջրի տակառիկները և մյուս սարքավորումները շահագործվում են սարքին վիճակում: Կեղտաջրերի հեռացման համակարգի, լվացարանների, զուգարանակոնքերի և միզամանների, ջրի տակառիկների, օդափոխիչ համակարգերի և այլ սարքավորումների անսարքությունները վերացվում են անմիջապես:				3	Հղում 1, Կետ 38.	Տեսողական	
51	Ջուգարանների զուգարանակոնքերի և միզամանների ջրի տակառիկները և լվացարանները ապահովված են մշտական հոսող (առնվազն) սառը ջրով: Մշտական հոսող ջրի բացակայության դեպքում ջրի տակառիկների և լվացարանների ջրագծերը լրացուցիչ միացված են անհրաժեշտ ծավալով խմելու ջրի տարողությունների:				3	Հղում 1, Կետ 39	Տեսողական հարցում	

Տվյալ ստուգաթերթը պատրաստվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

Հղում 1. ՀՀ առողջապահության նախարարի 16.04.09 թ. N 06-Ն «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոններ և նորմեր

Հղում 2. ՀՀ առողջապահության նախարարի 25.12.02 թ. N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմեր և կանոններ

Նշում 1 Սահմանափակ այցելությունների համար նախատեսված 1 տեղանոց հասարակական զուգարանը կարող է նախամուտք չունենալ, այդ դեպքում փակվող դռնով անհատական խցում տեղադրվում է լվացարանը:
Շարժական զուգարանների լվացարանը տեղադրվում է նախամուտքում կամ դրա բացակայության դեպքում անմիջապես խցում:
Լվացարանի բացակայության դեպքում շարժական զուգարանը ապահովվում է ախտահանիչ նյութով տոգորված միանվագ

օգտագործման անձեռոցիկներով:

Հանգստի գոտիներում լվացարանը կարող է տեղակայվել բացօթյա՝ շարժական զուգարանին անմիջապես հարակից տարածքում:

Նշում 2 Աշխատանքի արդյունավետության բարձրացման համար խորշի բացվածքում կարող է տեղադրվել առանցքային տիպի օդափոխիչ:

Նշում 3 ՍՆԻՊ 2.04.01-85 «Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի», ՍՆԻՊ 2.04.02-84* «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ» և ՍՆԻՊ 2.04.03-85 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերի և կանոնների (հաստատված է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82-Ն հրամանով, գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2001 թվականի նոյեմբերի 12-ին, Պետ. գրանցման թիվ 11701172) պահանջներին:

Նշում 4 Շարժական զուգարանները նախատեսված են կարճաժամկետ օգտագործման համար նախատեսվում են զանգվածային միջոցառումների, տոնախմբությունների իրականացման ժամանակ բացօթյա տարածքներում տեղադրման համար: Իրենցից ներկայացնում են 1 և ավելի տեղանոց, պոլիմերային նյութից պատրաստված տաղավարներ, որոնց կառուցվածքում նախամուտքի առկայությունը պարտադիր չէ:

Կեղտաջրերի մաքրման կառուցվածքը իրենից ներկայացնում է կեղտաջրերի ընդունման տարողություն, որը պարունակում է մանրէները քայքայող կենսաբանական ակտիվ հեղուկ և գարշահոտությունը վերացնող հեղուկ:

Նշում 5 Կենտրոնացված ջրամատակարարումը կարող է լինել կոմունալ /եթե սպասարկում է որևէ մասնագիտացված կազմակերպություն/ կամ գերատեսչական: Գերատեսչական ջրմուղը իրենից ներկայացնում է տվյալ օբյեկտին ջուր մատակարարող առանձին համակարգ՝ որը կազմված է առնվազն ջրամատակարարման աղբյուրից, ջրատարից, շենք-շինությունների ներքին ցանցից, ջրի վարակազերծման, անհրաժեշտության դեպքում՝ մաքրման կառույցից, կարող է լինել նաև ՕԿՋ Սպասարկումը կազմակերպվում է անմիջապես տվյալ օբյեկտի կողմից:

Անհրաժեշտ է պարզել արդյոք առկա է կենտրոնացված համակարգով տրվող խմելու ջրի պահուստային տարողություն: Վերջինիս առկայության դեպքում նմուշները վերցնում են մինչև պահուստային տարողությունը և դրանից հետո, եթե ջրի որակը փոխվում է պահուստային տարողություն մտնելուց հետո՝ առկա է երկրորդային աղտոտում: Ջրի նմուշները վերցնում են համարներից, հասարակական զուգարաններից, հանրային ծորակներից և այլն: Ջրի նմուշները վերցնում են համարներից, հասարակական զուգարաններից, հանրային ծորակներից և այլն: Հետազոտվում է մանրէաբանական և զգայորոշման ցուցանիշներով:

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմաներ
Ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէներ 1/	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Մանրէների ընդհանուր քանակություն կոլիֆագեր 3/	Գաղութներ առաջացնող մանրէների քանակը 1 մլ-ում Վահանակ առաջացնող միավորների (ՎԱՄ) քանակը 100 մլ-ում	50-ից ոչ ավել
Սուլֆիտվերականգնող կլոստրիդիաների սպորներ 4/	Սպորների քանակը 20 մլ-ում	Բացակայություն
Լյամբլաների ցիստեր 3/	Ցիստերի քանակը 50 մլ-ում	Բացակայություն

1/ Որոշման ժամանակ կատարվում է վերցված 100 մլ ջրի նմուշի եռանվազ հետազոտություն:

3/ Հետազոտությունները կատարվում են միայն մակերեսային ջրի աղբյուրներից սնվող ջրամատակարարման համակարգերում մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը:

4/ Հետազոտությունը կատարվում է ջրի մշակման տեխնոլոգիական եղանակի արդյունավետության գնահատման ժամանակ:

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմեր, ոչ ավելի
Հոտ	բալեր	2
Համ	-//-	2
Գունավորում	աստիճաններ	20 /35/ 1)
Պղտորություն	ՖՊՄ (ըստ ֆորմազինի) պղտորության միավոր կամ մգ/լ (ըստ կալիինի)	2.6 /35/ 1) 1.5 /2/ 1)

Տեսուչի ստորագրությունը _____

Տնտեսավարողի ստորագրությունը _____